Ստորև տպագրում ենք ադրբեջանցի մի խումբ լրագրողների թղթակցությունը, որը տպագրված է ամերիկյան «Նյու Յորք Թայմս» թերթում և մեր խմբագրության պատասխանը։ Խմբագրության պատասխանի սեղմ տարբերակը ուղարկված է «Նյու Յորք Թայմս» թերթին։

ՍԵՆԱՏԸ ՄԻՋԱՄՏՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳՈՐԾԵՐԻՆ

Պատմությունը չգիտե որևէ դեպք, երբ Ադրբեջանի Գերագույն խորհուրդը որոշում ընդունած լինի ԱՄՆ-ի ներքին քաղաքականության մասին։ Այդպիսի գործունեությունը դժվար է համատեղել միջպետական հարաբերությունների ընկալումների հետ, որոնք հիմնված են ուրիշի ներքին գործերի մեջ չխառնվելու վրա, հատկապես այժմ, երբ երկու երկրների ժողովուրդները նորից սկսել են հուսալ կրկին հասնելու բարեկամության, խաղաղության և երկկողմանի փոխըմբռնման։

Առավել ևս, մեզ համար դժվար է պատկերացնել, թե ինչը ստիպեց ամերիկյան սենատին ընդունել որոշում հայ-ադրբեջանական լարվածության մասին ԼՂԻՄ-ում, որը Ադրբեջանի պատմական տարածքի անքակտելի մասն է։ Մենք ստիպված ենք եզրակացնել, որ սենատը մոլորեցված է, քանզի դժվար է այլ կերպ բացատրել որոշման՝ «ԼՂԻՄ-ում ապրող հայերի նկատմամբ խտրականության» մասին պնդումը։

ԼՂԻՄ-ը գերազանցում է Ադրբեջանին սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշներով մեկ շնչին ընկնող բնակտարածությամբ, մշակութային օջախների քանակով, դպրոցներով և այլն։ Մընում է միայն ինֆորմացիայի բացակայությամբ բացատրել այն փաստը, որ սենատը, վերլուծելով սումգայիթյան իրադարձությունների հումանիտար կողմը (որտեղ զոհվել են 26 հայ և 6 ադրբեջանցի), առանց ուշադրության է թողնում 57 ադրբեջանցիներին, որոնք զոհվել են նույնատիպ իրադարձությունների ժամանակ Հայաստանում։ Սենատը չընկատելու է տալիս նաև այն, որ Հայաստանում, որտեղ մինչև 1988 թ. փետրվարը ապրում էին 200000 ադրբեջանցի, ոչ մեկը չի մնացել, քշված լինելով, թողնված առանց գոյատևման միջոցների, և անգամ սպանված։

Հարցի էությունը ոչ թե խորհրդային ղեկավարության «գերապատվությունն» է, այլ Ադրբեջանի, որպես սուվերեն պետության իրավունքն է (ճիշտ այնպես, ինչպես և ԱՄՆ-ի) իր սեփական տարածքում անել այն, ինչ հարկ կըհամարի։

Մենք համարում ենք, որ սենատի կողմից հավանության արժանացած որոշումը իրենից ներկայացնում է միջամտություն ուրիշի ներքին գործերին և սրում է քաղաքական, էթնիկական և կրոնական առճակատումը ոչ միայն տվյալ ռեգիոնում, այլև ամբողջ աշխարհում։

Մենք չէինք ցանկանա ամերիկյան ժողովրդի մեջ ստեղծել այն պատկերացումը, որ ադրբեջանական ժողովրդի արտաբուխ և բարեկամական վերաբերմունքը դեպի ԱՄՆ-ի ժողովուրդը կամ խոր հարգանքը, որ տածում ենք մենք դեպի ամերիկյան կոնգրեսը, խարխլվեր այն իրադարձության պատճառով, որը մենք հակված ենք դիտել որպես պատահական թյուրիմացություն։ Մենք կարծում ենք, որ սենատը հնարավորություն կըգտնի ուղղել այս թյուրիմացությունը այն ճանապարհով, որը լավագույնը կհամարվի։

Դ. ԱԼԻԲԵԿՈՎ
«Կոմունիստ» թերթի խմբագիր

Կ. ՌԱՀԻՄՈՎ
«Ազերբայջան կոմունիստի» ամսագրի գլխավոր խմբագիր

Ա. ՇԱՐԻՖՈՎ
Ադրբեջանի հեռագրական գործակալության դիրեկտոր

Բաքու, ԽՍՀՄ, 12 սեպտեմբերի 1989 թ.

Տպագրված է 18.10.89 թ.